ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 1997 թվականի նոյեմբերի 18-ի որոշման հիման վրա Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հիմնադրման մասին Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալուց բխող պարտավորությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով ավելի լայնորեն ընդգրկել Հայաստանի Հանրապետության գիտնականներին և մասնագետներին այն նախագծերի նախապատրաստման և իրացման գործում, որոնք իրականացվում են Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (այսուհետ՝ ՄԳՏԿ) գործունեության շրջանակներում, պայմանավորվեցին Հայաստանի Հանրապետությունում ՄԳՏԿ Հայկական տարածաշրջանային բաժանմունքի (այսուհետ՝ ՄԳՏԿ ՀՏԲ) ստեղծման, տեղակայման պայմանների և գործունեության ապահովման մասին:

Հոդված 1
ՄԳՏԿ ՀՏԲ կարգավիճակը և խնդիրները

ՄԳՏԿ ՀՏԲ-ն ՄԳՏԿ-ի տարածաշրջանային ներկայացուցչությունն է, որը հանդիսանում է միջկառավարական կազմակերպություն: ՄԳՏԿ ՀՏԲ-ն գործում է համաձայն Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հիմնադրման մասին Համաձայնագրի և ՄԳՏԿ Կանոնադրության, ինչպես նաև համաձայն սույն Համաձայնագրի: Իր անձեռնմխելիությունների և արտոնությունների ծավալով ՄԳՏԿ ՀՏԲ-ն հավասար կլինի դիվանագիտական առաքելությանը: ՄԳՏԿ ՀՏԲ-ն կլինի իրավաբանական անձ և կունենա իր կնիքը, ընթացիկ և այլ հաշվեհամարներ բանկային հաստատություններում:

ՄԳՏԿ ՀՏԲ հիմնական խնդիրներն են.

- աջակցություն ՄԳՏԿ փաստաթղթերի տարածման գործում,

- նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ձևավորման և նրանց իրագործման շուրջ խորհրդատվությունների անցկացում,
-հայ գիտնականների և մասնագետների մասնակցությամբ հայտերի և ֆինանսավորվող նախագծերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում և պահպանում,
- ուսումնական կուրսերի, գիտատեխնիկական սեմինարների, ինչպես նաև ՄԳՏԿ գործողություններին առնչվող այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում,
- աջակցություն նախագծեր իրականացնողներին սարքավորումների ձեռքբերման և ՄԳՏԿ ֆինանսավորմամբ նախագծերի իրականացման գործում Հայաստանի Հանրապետություն առաքվող սարքավորումների մաքսային փաստաթղթերի ձևակերպման գործում,
- ՄԳՏԿ պարտականությունների, ինչպես նաև տեխնիկական և աուդիտորական ստուգումներ իրականացնելու նպատակով ժամանող պատվիրակությունների հետ հանդիպումների կազմակերպում և նրանց ուղեկցում:

Հոդված 2
ՄԳՏԿ ՀՏԲ-ի ֆինանսական, նյութական և տեխնիկական աջակցություն

2.1 Ֆինանսավորումը

ՄԳՏԿ ՀՏԲ-ի գործունեությանը կաջակցեն երկու Կողմերը:

ՄԳՏԿ ՀՏԲ-ի գործունեության համար հայկական Կողմի ծախսերը կատարվում են ամեն տարի գիտության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներից:

ՄԳՏԿ-ի բյուջեն կծածկի ՄԳՏԿ ՀՏԲ-ի ծախսերի մի մասը, այդ թվում՝ ՄԳՏԿ ՀՏԲ-ի գործուղումների վճարման, կապի ծառայությունների, համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման, ինչպես նաև՝ գրասենյակային նյութերի, և սարքավորումների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծախսերը:

2.2 Գրասենյակի տարածքները և նյութական ու տեխնիկական աջակցությունը

Հայկական կողմը ՄԳՏԿ ՀՏԲ-ին տրամադրում է կահավորված, հեռախոսակապով ապահովված, բարվոք վիճակում գտնվող ծառայողական տարածքներ, ինչպես նաև ապահովում է այդ

տարածքների կոմունալ ծառայությունները և անվտանգությունը: ՄԳՏԿ ՀՏԲ-ն տեղակայվում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում՝ հետևյալ հասցեով. Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, սենյակներ 7 և 8:

ՄԳՏԿ միջոցներով նշված տարածքներում կարող են իրականացնել ներքին վերափոխումներ /որոնք չպետք է փոփոխեն շենքի կառուցվածքային տարրերը/, որոնք ՄԳՏԿ ղեկավարության կարծիքով անհրաժեշտ են ՄԳՏԿ ՀՏԲ գործունեության համար:

Գրասենյակի համար տրամադրված տարածքը ունի 50 քմ. ընդհանուր մակերես, որն ապահովում է այցելուներ ընդունելու, ինչպես նաև համակարգչային և բազմացնող տեխնիկայի արդյունավետ օգտագործման և ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցների ոչ պակաս, քան երեք աշխատատեղի հնարավորություն:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ապահովում է ՄԳՏԿ ՀՏԲ տարածքների անվտանգությունը՝ համաձայն այն շենքի պահպանման ռեժիմի, որտեղ տեղակայված է ՄԳՏԿ ՀՏԲ-ն: ՄԳՏԿ ՀՏԲ ղեկավարը և նրա կողմից լիազորված ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցներն իրավունք ունեն այցելուներ ընդունել ՄԳՏԿ ՀՏԲ տարածքում՝ ըստ ՄԳՏԿ ՀՏԲ ղեկավարի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարության կողմից պատրաստված հրահանգների: ՄԳՏԿ ՀՏԲ այցելուների համար պատասխանատվությունը կրում է ՄԳՏԿ ՀՏԲ ղեկավարը:

2.3 Տրանսպորտային ծառայություններ

Հայկական Կողմը /սույն Համաձայնագրի 2.1 հոդվածի համաձայն նախատեսված միջոցներից/ ապահովում է ՄԳՏԿ ՀՏԲ-ի տրանսպորտային սպասարկումը՝ հատկացնելով ավտոմեքենա («Վոլգա» կամ «Ռաֆ» մակնիշի)՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների օգտագործման և գրանցման գործող կանոնների:

2.4 Ավտոտրանսպորտի, տարածքների, սարքավորումների և կահույքի օգտագործման նկատմամբ հսկողությունը

ՄԳՏԿ ՀՏԲ ղեկավարը կամ նրա կողմից նշանակված անձը, համաձայն սույն Համաձայնագրի, կիրականացնի ՄԳՏԿ ՀՏԲ-ին տրամադրված կամ ՄԳՏԿ ՀՏԲ կողմից այլ ճանապարհով ձեռք բերված

ավտոտրանսպորտային միջոցների, տարածքների, սարքավորումների և կահույքի օգտագործման նկատմամբ հսկողություն:

2.5 Սարքավորումների շահագործումը, սպասարկումը և վերանորոգումը

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան ապահովում է ՄԳՏԿ ՀՏԲ-ին հատկացված տարածքում նրա անձնակազմի համար աշխատանքային լավ պայմաններ:

ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցների մեղքով ՄԳՏԿ ՀՏԲ տարածքին հասցված վնասի դեպքում վերանորոգումն իրականացվում է ՄԳՏԿ միջոցների հաշվին:

ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցների մեղքով պիտանիությունը կորցրած սարքավորումների վերանորոգումն իրականացվում է ՄԳՏԿ միջոցների հաշվին:

ՄԳՏԿ ՀՏԲ տարածքներին, սարքավորումներին և տրանսպորտային միջոցներին երրորդ կողմից հասցված վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.6 Ապահովագրումը և Կորուստների փոխհատուցումը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից ՄԳՏԿ ՀՏԲ-ին տրամադրված տարածքների և սարքավորումների ապահովագրումն իրականացվում է սույն Համաձայնագրի 2.1 հոդվածի համաձայն՝ հայկական Կողմից տրամադրվող միջոցների հաշվին: ՄԳՏԿ ՀՏԲ-ի կողմից ձեռք բերված սարքավորումների ապահովագրումն իրականացվում է ՄԳՏԿ-ի հաշվին:

2.7 ՄԳՏԿ ՀՏԲ -ի նյութական աջակցության համար ծախսերը

Հայկական Կողմը 1998 թվականի մայիսի դրությամբ ՄԳՏԿ ՀՏԲ-ին ցուցաբերում է նյութական առաջնային աջակցություն 10.000.000 /տաս միլիոն/ դրամ (1998թ. մայիսի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից դոլարի նկատմամբ հաստատված կուրսի համաձայն՝ 20.000 ԱՄՆ դոլար) գումարի չափով:

Հոդված 3
ՄԳՏԿ ՀՏԲ -ի անձնակազմը

3.1 Անձնակազմի վարձատրությունը

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը սույն Համաձայնագրի 2.1 հոդվածին համապատասխան՝ հայկական Կողմից հատկացվող միջոցների հաշվին ժամանակին ապահովում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցների աշխատավարձային ֆոնդի ամբողջական ֆինանսավորումը: ՀՀ քաղաքացիներ հանդիսացող ՄԳՏԿ ՀՏԲ-ի աշխատակիցների վարձատրության պայմանները որոշվում են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության համապատասխան դրույթներով՝ նախատեսելով աշխատանքի բարդության դիմաց դրամական պարգևատրման հնարավորություն:

3.2 Անձնակազմի նշանակումը

ՄԳՏԿ գործադիր տնօրենը ՄԳՏԿ կենտրոնակայանի միջոցով ՄԳՏԿ ՀՏԲ աշխատանքի կարող է ուղարկել ցանկացած աշխատակցի:

ՄԳՏԿ ՀՏԲ աշխատանքային խմբում ընդգրկելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թեկնածությունները Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կողմից համատեղ ներկայացվում են ՄԳՏԿ գործադիր տնօրենին: Նշանակումն ուժի մեջ է մտնում ՄԳՏԿ գործադիր տնօրենի հաստատումից հետո:

Անձնակազմի Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող աշխատակիցների գործունեության հետ կապված բոլոր հարցերը որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.3 Գործունեության հսկողությունը և կարգավորումը

ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցները ենթարկվում են ՄԳՏԿ գործադիր տնօրենի կարգադրություններին և ցուցումներին, որի լիազորված անձն է հանդիսանում ՄԳՏԿ ՀՏԲ ղեկավարը:

ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակիցները ղեկավարվում են ՄԳՏԿ դրույթներով և կանոններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Հոդված 4
Համաձայնագրի գործողությունը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ հայկական Կողմի ներպետական ընթացակարգերի ավարտի մասին գրավոր ծանուցման պահից:

Սույն Համաձայնագիրը գործում է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հիմնադրման մասին Համաձայնագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում կամ մինչև ՄԳՏԿ Ղեկավարների խորհրդի ՄԳՏԿ ՀՏԲ-ի փակման մասին որոշման ընդունումը կամ մինչև ՄԳՏԿ հիմնադրման մասին համաձայնագրից Հայաստանի Հանրապետության դուրս գալը՝ կախված նրանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել:

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ստեղծման մասին Համաձայնագրի և սույն Համաձայնագրի իրականացման համար հայկական Կողմի հսկողությունը դրվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի վրա, որոնք համատեղ ՄՏԳԿ-ի հետ կկնքեն լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն հակասի սույն Համաձայնագրին և կճշգրտեն Կողմերի պարտավորությունները ՄԳՏԿ ՀՏԲ-ի գործունեության աջակցության գործընթացում:

Սույն Համաձայնագրում փոփոխություններ կարող են կատարվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և երկու Կողմերի համաձայնության առկայության դեպքում:

Սույն Համաձայնագրի որևիցե հոդված կամ մաս չի կարող մեկնաբանվել կամ օգտագործվել ՄԳՏԿ-ի կողմից իրականացվող կամ մատուցվող ծրագրերի հայցողների կամ նախագծեր իրականացնողների, ինչպես նաև Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ստեղծման մասին Համաձայնագրով, ՄԳՏԿ Կանոնադրությամբ, այլ միջազգային համաձայնագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ՄԳՏԿ և ՄԳՏԿ ՀՏԲ ներկայացված անձնակազմի հնարավորությունների և իրավունքների սահմանափակման նպատակով:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի հունիսի 15-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Բոլոր օրինակները հավասարազոր են:

Տեքստերի անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում Համաձայնագրի անգլերեն տարբերակը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 5-ից: